ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 129

«23» դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Գետաշենի համայնքի 2016թ. բյուջեն, հաստատված ավագանու 2015թ. դեկտեմբերի 17-ի թիվ 43-Ն որոշմամբ:

Առդիր 83 թերթ:

Գետաշենի գյուղական համայնքի
ղեկավար՝ Գ.Հովհաննիսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.16/1921-15
«25» 12 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

"17" դեկտեմբերի 2015թ. N 43-Ն

## ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և «Բյուջետային Համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի հունիսի 24-ի օրենքի 32-րդ հոդվածով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Գետաշեն գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն

ա) եկամուտների գծով 57.821.500 (հիսունյոթ միլիոն ութ հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր) 22 դրամ

բ) ծախսերի գծով 57.821.500 (հիսունյոթ միլիոն ութ հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր) 22 դրամ

գ) տարեվերջի հավելուրդը և հավելուրդի օգտագործման ուղղությունները.

Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները, ըստ առանձին եկամտատեսակների համաձայն հատված 1-ի

Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը, ըստ գործառնական դասակարգման համաձայն հատված 2-ի

Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը, ըստ տնտեսական դասակարգման համաձայն հատված 3-ի

Հաստատել համայնքի բյուջեր միջոցների տարեվերջի հավելուրդը համաձայն հատված 4-ի

Հաստատել հավելուրդի օգտագործման ուղղությունները, համաձայն հատված 5-ի

Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման համաձայն հատված 6-ի:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսական դասակարգման ծախսեր նախատեսված հոդվածների միջև:
3. Սահմանել, որ փոփոխման հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 50 %-ը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Իսկականի հետ ճիշտ է.

Ավագանու անդամներ

Գ. Արգարյան

Խ. Զուլոյան

Գ. Կոստանյան

Հ. Սահակյան

Գ. Հովհաննիսյան

Համայնքի ղեկավար

2015 թվականի դեկտեմբերի 17

Գ.Գետաշեն

Ժամը 16:40

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ՝ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 43-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշենի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշենի համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 43-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի պահանջով և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է համայնքի զարգացման նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշենի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշենի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 43-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

Գետաշենի գյուղական համայնքի
ղեկավար՝ Գ. Հովհաննիսյան

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝

2014թ. փաստացի, 2015թ. հաստատված, 2016թ. նախատեսվող

| N | եկամուտներ | 2014թ փաստացի | N | եկամուտներ | 2015թ հաստատված | N | եկամուտներ | 2016թ նախատեսվող |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 7418.9 | 1 | Հողի հարկ | 10419.9 | 1 | Հողի հարկ | 15066.2 |
| 2 | Գույքահարկ | 4878.3 | 2 | Գույքահարկ | 4840.8 | 2 | Գույքահարկ | 5257.3 |
| 3 | Վարձ. վճար | 2653.0 | 3 | Վարձ. վճար | 2158.9 | 3 | Վարձ. վճար | 2476.2 |
| 4 | դոտացիա | 28364.4 | 4 | դոտացիա | 32795.9 | 4 | դոտացիա | 34925.8 |
| 5 | տեղ. տուրք | 111.6 | 5 | տեղ. տուրք | 96.0 | 5 | տեղ. տուրք | 96.0 |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | 43426.2 | | | 50311.5 | | | 57821.5 |

Բյուջեի եկամուտների հաշվին կատարվող ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման, ըստ տարիների՝ 2014թ. փաստացի, 2015թ. հաստատված, 2016թ. նախատեսվող

| N | Ծախսերը | 2014 փաստացի | 2015 հաստատված | 2016 նախատեսվող |
|---|---|---|---|---|
| 1 | համայնքային ծառայություն | 20445.4 | 27603.6 | 27132.0 |
| 2 | մշակույթ | 2585.0 | 2940.9 | 4398.0 |
| 3 | գրադարան | 819.9 | 1157.0 | 1389.0 |
|  | հուշարձանների պահպանություն | 0.0 | 980.0 | 200.0 |
| 4 | սոց.օգնություն | 5670.0 | 6600.0 | 6600.0 |
| 5 | երիտասարդական | 999.4 | 1200.0 | 2200.0 |
| 6 | աղբահանություն | 0.0 | 1560.0 | 1560.0 |
| 7 | հանգիստ և սպորտ | 0.0 | 0.0 | 600.0 |
| 8 | պահուստային ֆոնդ | 0.0 | 4664.2 | 2742.5 |
| 9 | ջրամատակարարում | 11282.7 | 13020.0 | 11000.0 |
|  |  | 41802.4 | 59725.7 | 57821.5 |

Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման

2014թ. փաստացի, 2015թ. հաստատված, 2016թ. նախատեսվող

| հոդված | 2014 փաստացի | հոդված | 2015 հաստատված | հոդված | 2016 նախատեսվող |
|---|---|---|---|---|---|
| 4111 | 19867.7 | 4111 | 22679.5 | 4111 | 23634.0 |
| 4112 | 863.0 | 4112 | 1040.0 | 4112 | 1040.0 |
| 4212 | 6900.1 | 4212 | 11250.0 | 4212 | 11000.0 |
| 4213 | 0.0 | 4213 | 1560.0 | 4213 | 1560.0 |
| 4214 | 232.0 | 4214 | 480.0 | 4214 | 400.0 |
| 4221 | 74.9 | 4221 | 400.0 | 4221 | 400.0 |
| 4232 | 35.0 | 4232 | 215.0 | 4232 | 230.0 |
| 4233 | 0.0 | 4233 | 100.0 | 4233 | 100.0 |
| 4234 | 91.0 | 4234 | 300.0 | 4234 | 200.0 |
| 4237 | 0.0 | 4237 | 0.0 | 4237 | 200.00 |
| 4239 | 999.4 | 4239 | 1000.0 | 4239 | 1200.0 |
| 4241 | 370.0 | 4241 | 665.0 | 4241 | 665.0 |
| 4251 | 878.0 | 4251 | 3300.0 | 4251 | 2100.0 |
| 4252 | 0.0 | 4252 | 650.0 | 4252 | 1100.0 |
| 4261 | 323.7 | 4261 | 600.0 | 4261 | 1100.0 |
| 4264 | 450.0 | 4264 | 500.0 | 4264 | 500.0 |
| 4267 | 161.4 | 4267 | 250.0 | 4267 | 250.0 |
| 4269 | 200.0 | 4269 | 722.0 | 4269 | 2800.0 |
| 4729 | 5370.0 | 4729 | 6000.0 | 4729 | 6000.0 |
| 4819 | 300.0 | 4819 | 600.0 | 4819 | 600.0 |
| 4891 | 0.0 | 4891 | 4664.2 | 4891 | 2742.5 |
| 5112 | 4438.3 | 5122 | 700.0 | 5122 | 0.0 |
| 5122 | 247.9 | 5129 | 2050.0 | 5131 | 0.0 |
| | | | | | |
| | | | | | |
| | 41802.4 | | 59725.7 | | 57821.5 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

Ձեզ եմ ներկայացնում 2016թվականի ուղերձը:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների արդյունավետ օգտագործումից: Բյուջեի կազմման և կատարման ժամանակ համայնքն իր առջև դրել է հետևյալ նպատակները՝

ա/ Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով եկամուտների հավաքագրման մակարդակը:

բ/ Բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների մակարդակը և որակը:

գ/ Պետական բյուջեից համայնքին տրամադրվող դոտացիան հիմնականում պետք է ուղղել համայնքի սոցիալ տնտեսական զարգացմանը:

Ձեզ եմ ներկայացնում 2016 թվականի եկամուտների հիմնավորումը ըստ առանձին եկամտատեսակների՝

| | | |
|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 15066.2 |
| 2 | Գույքահարկ | 5257.3 |
| 3 | Վարձ. վճար | 2476.2 |
| 4 | դոտացիա | 34925.8 |
| 5 | տեղ. տուրք | 96.0 |

2016թ. բյուջեում սեփական եկամուտների կանխատեսման համար հիմք են հանդիսացել նախորդ տարիների մուտքերի կատարման վերլուծությունը, ինչպես նաև բյուջետային տարվա հարկային եկամուտների նվազեցային տվյալները:

Ծախսերի վերծանումը ըստ գործառնական դասակարգման՝

| | | |
|---|---|---|
| 1 | համայնքային ծառայություն | 27132 |
| 2 | մշակույթ | 4398 |
| 3 | գրադարան | 1389 |
| 4 | սոց. օգնություն | 6600 |
| 5 | երիտասարդական | 2200 |
| 6 | աղբահանություն | 1560.0 |
| 7 | հանգիստ և սպորտ | 600 |
| 8 | պահուստային ֆոնդ | 2742.5 |
| 9 | ջրամատակարարում | 11000 |

Ծախսերի վերծանումը ըստ տնտեսագիտական դասակարգման

| | |
|---|---|
| հոդված 4111 | 23634 |

| | |
|---|---|
| 4112 | 1040.0 |
| 4212 | 11000 |
| 4213 | 1560.0 |
| 4214 | 400.0 |
| 4221 | 400.0 |
| 4232 | 230.0 |
| 4233 | 100.0 |
| 4234 | 200.0 |
| 4237 | 200.0 |
| 4239 | 1200.0 |
| 4241 | 665.0 |
| 4251 | 2100.0 |
| 4252 | 1100.0 |
| 4261 | 1100.0 |
| 4264 | 500.0 |
| 4267 | 250.0 |
| 4269 | 2800.0 |
| 4729 | 6000.0 |
| 4819 | 600.0 |
| 4891 | 2742.5 |

Ես դիմում եմ համայնքի բնակչությանը, ավագանուն՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերել համայնքի 2016 թվականի բյուջեի միջոցների գոյացման և նպատակային ծախսման ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գույքահարկի և հողի հարկի, հողերի և այլ գույքի վարձակալության վարձավճարների գծով առանձին ցուցանիշների վերաբերյալ

/հազար դրամով/

| NN | Եկամտատեսակները | ապառքը տարեսկզբի դրությամբ 01.01.2015 | ապառքը տարեվերջի դրությամբ 01.10.2015 | տվյալ տարվա հաշվարկային գումարը 01.12.2015 |
|---|---|---|---|---|
| 1 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 317.0 | 207.5 | 130.5 |
| 2 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողերի համար | 43001.5 | 55045.0 | 15066.2 |
| 3 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 3277.7 | 6498.1 | 5126.8 |
| 4 | Հողերի վարձակալության վարձավճարներ | 2312.9 | 4219.8 | 2476.2 |
| 5 | Այլ գույքի վարձակալության վարձավճարներ | 0.0 | 130.0 | 130.0 |

Գետաշեն համայնքի ղեկավար՝ Գ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

"25" նոյեմբերի 2015թ. N 36-Ն

## ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Գետաշեն գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2016 թվականի դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Իսկականի հետ ճիշտ է

Ավագանու անդամներ

Գ. Աբգարյան

Խ. Զուլոյան

Գ. Կոստանյան

Հ. Սահակյան

Համայնքի ղեկավար Գ. Հովհաննիսյան

2015 թվականի նոյեմբերի 25

Գ.Գետաշեն

*ՀԱՎԵԼՎԱԾ*

*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ*

*ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N 36-Ն ՈՐՈՇՄԱՆ*

# ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքեր և շինություններ /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝

1.մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող և հասարակական, և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ:

2.սույն կետի /ա/ ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա/ 201-ից 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

բ/ 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

գ/ 1001 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 /երեսուն հազար/ դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3.մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 /հազար հինգ հարյուր/ դրամ.

4. 20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլատվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքների գործառական նշանակության փոփոխության 1000 /հազար/ դրամ.

2. բացի օբյեկտի վերակառուցման ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքների, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության, բացի սույն կետի “1” ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինության

համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2000 /երկու հազար/ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել

1/ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար, հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 /երկու հազար/ դրամ: 2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 /երկու հազար/ դրամ:

5. Համայնքի տարածքում 1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ.

2/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերի հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի ընթացիկ տարվա համար սահմանել 50000 / հիսուն հազար/ դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 /հիսուն հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1/ առևտրի օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/դրամ.

2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.

3/ բաղնիքների /սաունաների/ համար՝ 200.000 /երկու հարյուր հազար/ դրամ.

4/ խաղատների կազմակերպման համար՝ 500.000 /հինգ հարյուր հազար/ դրամ.

5/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.

6/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդողարտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ

2/թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը քան և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

3/ այլ արտաքին գովազդի համար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ.

4/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 /յոթ հարյուր/ դրամ.

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ:
11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար 5000 /հինգ հազար/ դրամ:
12. Գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար 1000 /մեկ հազար/ դրամ:
13. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար՝ 5000 /հինգ հազար/ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

"25" նոյեմբերի 2015թ. N 37

## ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Գետաշեն համայնքի ղեկավարի աշխատավարձը սահմանել 216 000 (երկու հարյուր տասնվեց հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Իսկականի հետ ճիշտ է

Ավագանու անդամներ

Գ. Աբգարյան

Խ. Ջուլոյան

Գ. Կոստանյան

Հ. Սահակյան

Համայնքի ղեկավար Գ. Հովհաննիսյան

2015 թվականի նոյեմբերի 25

Գ.Գետաշեն

ժամը 16:30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

Գ.ԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

"25" նոյեմբերի 2015թ.. N 38

## ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը 2016 թվականի համար համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Իսկականի հետ ճիշտ է

Ավագանու անդամներ

Գ. Աբգարյան

Խ. Զուլոյան

Գ. Կոստանյան

Հ. Սահակյան

Համայնքի ղեկավար Գ. Հովհաննիսյան

2015 թվականի նոյեմբերի 25
Գ.Գետաշեն
ժամը 16:30

Հավելված
Գետաշեն համայնքի ավագանու
25.11. 2015թ. N 38 որոշման

ԳԵՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 18:
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Հաստիքային միավորը | Պաշտոնի դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 216.000 |
| 2 | Համայնքի ղեկավար տեղակալ | 1 | 163.000 |
| | ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 140.000 |
| 2 | Առաջատար մասնագետ | 1 | 130.000 |
| 3 | Առաջատար մասնագետ | 1 | 130.000 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 85.000 |
| 5 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 85.000 |
| 6 | երկրորդ կարգի մասնագետ | 1 | 83.000 |
| 7 | երկրորդ կարգի մասնագետ | 1 | 83.000 |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | | |
| 1 | Հավաքարար | 1 | 73.000 |
| 2 | Պահակ | 1 | 73.000 |
| 3 | Էլեկտրիկ | 1 | 73.000 |
| 4 | Գործավարուհի | 1 | 83.000 |
| 5 | Հակակարկտային կայանների պահակ | 1 | 102.000 |
| | | | |
| 1 | Մշակույթի տան տնօրեն | 1 | 73.000 |
| 2 | Մշ.տան այգեպան | 1 | 73.000 |
| 3 | Գրադարանի վարիչ | 1 | 73.000 |
| 4 | Մշակույթի տան գեղմասվար | 1 | 80.000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 1.818.000 |

Գետաշեն համայնքի ղեկավար՝ Գ. Հովհաննիսյան

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
(մարզի անվանումը)

ԳԵՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)

# 2016 Թ Վ Ա Կ Ա Ն Ի Բ Յ Ո Ւ Ջ Ե

Հաստատված է Գետաշենի գյուղական համայնքի
(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)

ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N 43-Ն որոշմամբ
(ամիս ամսաթիվ)

ԱՐՄԱՎԻՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
(համայնքի բյուջեն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ ԳԱԳԻԿ ԱՐԿԱԴԻԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(Անուն, հայրանուն, ազգանուն)